

Ոչ խնամակալ ծնողի իրավունքները և պարտականությունները Noncustodial Parent's Rights and Responsibilities

Երեխաների Օգնության Բաժինը (ԵՕԲ)¹

1. Մահմանում և հարկադրում է երեխաների օգնության հրամանագրերի և բժշկական օգնության պարտականությունների կատարումը:
2. Վերանայում է երեխաների օգնության հրամանագրերը հնարավոր փոփոխություններ կատարելու համար:
3. Ստանում, գրանցում և բաշխում է երեխաների օգնության վճարումները Վաշինգտոն նահանգի օգնության գրանցման (Washington State Support Registry, WSSR) միջոցով:

Ոչ խնամակալ ծնող

Դուք ոչ խնամակալ ծնող եք: Ոչ խնամակալ ծնողը բնական հայրն է, կամ ընդունված որդեգրող կամ դատարանով նշանակված հայրը, բնական մայրը, կամ դատարանով նշանակված կամ որդեգրող մայրը, ով պետք է ֆինանսական օգնություն տրամադրի կախյալ երեխաներին: Նահանգային և պետական օրենքները հարկադրում են այս պարտականությունը:

Երեխաների օգնության վճարումներ

Սովորաբար դուք պետք է երեխաների օգնություն վճարեք: Նրանից հետո, երբ ԵՕԲ-ը ձեզ ծանուցում ներկայացնի, որ դուք պետք է երեխաների օգնություն վճարեք, ԵՕԲ-ն չի մուտքագրի ձեր հաշիվը այն վճարումների դիմաց, որոնք կատարվել են WSSR-ից, ցեղային դատարանից կամ երեխաների օգնության գործակալությունից, ինչպես նաև այլ նահանգի դատարանից ու երեխաների օգնության գործակալությունից տարբեր որևէ այլ կազմակերպության: ԵՕԲ-ն ձեր հաշիվին չի մուտքագրի օգնության հրամանագրի մյուս կողմին կատարված ուղղակի վճարումները, եթե այդ գումարը չի վճարվել որևէ գործակալության կողմից՝ որպես խնամարկյալի նպաստ, ինչպես օրինակ՝ Սոցիալական ապահովության վարչության, Աշխատանքի և արդյունաբերության դեպարտամենտի կամ Վետերանների հարցերով դեպարտամենտի կողմից երեխաների օգնության պարտականության նպատակով:

1. Անմիջապես տեղեկացրեք ԵՕԲ-ին, եթե այլ նահանգի կամ ցեղային երեխաների օգնության գործակալությունը կամ նահանգային կամ ցեղային դատարանը պահանջել է, որ դուք իրենց կատարեք երեխաների օգնության վճարումները:
2. Վճարումներն ուղարկեք միայն ստորև նշված WSSR-ի հասցեով, բացառությամբ այն դեպքի, երբ ԵՕԲ-ը ձեզ գրավոր տեղեկացնում է, որ ձեր գործը փակված է:

Բոլոր օգնության վճարումները պետք է կատարվեն Վաշինգտոն նահանգի օգնության գրանցման (WSSR) հասցեին:

Դուք կարող եք ընտրել վճարման հետևյալ տարբերակներից մեկը՝

1. Աշխատավարձի հանումներ: Օգնության հրամանագրերի մեծամասնությունը թույլ է տալիս ԵՕԲ-ին գանձել օգնությունն աշխատավարձի հանումներից կամ պահանջում է WSSR-ի միջոցով վճարել: Եթե ձեր հրամանագիրը թույլ է տալիս ԵՕԲ-ին դա անել, ապա ԵՕԲ-ն կփորձի գանձել օգնությունն աշխատավարձի հանումներից:
2. Անձնական վճարագիր (չեկ), դրամական հրամանագիր (money order), երաշխավորված վճարագիր կամ գանձապահական չեկ (cashier's check): Ուղարկեք բոլոր վճարագրերը և դրամական հրամանագրի հրամանագրերը՝

WASHINGTON STATE SUPPORT REGISTRY
PO BOX 45868,
OLYMPIA WA 98504-5868

3. Դրամական էլեկտրոնային փոխանցում (Electronic Funds Transfer, EFT): EFT թույլ է տալիս օգնության վճարումների ավտոմատ հանումներ վճարագրի կամ խնայողությունների հաշվից ամեն ամիս: Լրացուցիչ տեղեկությունների համար գանձահարեք 800-468-7422 հեռախոսահամարով:

4. Համացանց (Ինտերնետ): Համացանցով վճարելը թույլ է տալիս օգնության վճարումը կատարել՝ գումարը հանելով վճարագրի կամ խնայողությունների հաշվից: Լրացուցիչ տեղեկությունների համար, այցելեք ԵՕԲ-ի կայքը՝ <https://secureaccess.wa.gov>:

5. Կրեդիտ կամ դեբիտ քարտ: Լրացուցիչ տեղեկությունների համար, այցելեք ԵՕԲ-ի կայքը՝ <https://www.dshs.wa.gov/esa/division-child-support/creditdebit-card-payments>:

Եթե ձեր բանկը վերադարձնում է ձեր վճարագրերից մեկը կամ չի ընդունում EFT կամ համացանցով վճարումը դրամական միջոցների անբավարարության պատճառով, ապա ԵՕԲ-ն ապագա բոլոր վճարումները կընդունի միայն կանխիկ դրամով, դրամական հրամանագրով, գանձապահական վճարագրով, երաշխավորված վճարագրով կամ աշխատավարձի հանումով: Գրեք ձեր հաշվի համարը **IN** _____ բոլոր վճարումների և հաղորդագրությունների վրա:

Եթե իրավական պատճառներ ունեք ձեր երեխաներին ֆինանսական օգնություն չտրամադրելու համար կամ եթե ԵՕԲ-ն սխալմամբ ձեզ ներառել է այս գործընթացի մեջ, ապա անմիջապես տեղեկացրեք ԵՕԲ-ին այդ մասին:

Եթե ԵՕԲ-ն ձեզ ծանուցի, որ կասեցնում ենք ձեր օգնության պարտականության գանձումը, ձեր պարտավորությունը գանձման ենթակա կդառնա ապագայում: Այս գործողությունը կատարելուց առաջ ԵՕԲ-ն ձեզ կտեղեկացնի այդ մասին:

Եթե դուք ազատագրված եք կամ դատապարտված եք ավելի քան 6 ամիս ազատագրկման բանտում, կամ ուղղիչ հաստատությունում, ապա ձեր երեխայի օգնության հրամանագիրը կարող է կրճատվել (դադարեցվել) յուրաքանչյուր ամսվա համար 10 ԱՄՆ դոլարի չափով՝ յուրաքանչյուր երեխայի հրամանագրի համար: Դուք, խնամակալ ծնողը, կամ ԵՕԲ-ն կարող եք հայցել դադարեցումը: Եթե դադարեցումը կիրառելի է Ձեր գործի նկատմամբ, ապա դուք ծանուցում կստանաք ԵՕԲ-ի կողմից դադարեցման պայմանների և անհամաձայնության դեպքում, լսում խնդրելու յուրաքանչյուր անձի իրավունքի վերաբերյալ: Օգնության հրամանագրի գումարը կավելանա մինչև 50% ձեր ազատման չորրորդ ամսից սկսած, և կրկին կբարձրացվի մինչև Ձեր կողմից ի սկզբանե վճարվող գումարի 100%-ը ձեր ազատումից մեկ տարի անց:

Բժշկական օգնության պարտականություններ

Եթե ձեր օգնության հրամանագիրը պահանջում է, որ դուք ձեր երեխաներ առողջապահական ապահովագրում տրամադրեք, ԵՕԲ-ն քայլեր կձեռնարկի հարկադրելու ձեր այդ պարտականությունը: Եթե ձեր օգնության հրամանագիրը պահանջում է, որ դուք կանխիկ դրամով վճարեք բժշկական օգնությունը, ԵՕԲ-ն կնշանակի այդ գումարի քանակը և կգանձի այն:

1. Անմիջապես տեղեկացրեք ԵՕԲ-ն, եթե որևէ բան փոխվում է ձեր օգնության հրամանագրում նշված երեխաներ առողջապահական ապահովագրման մեջ:
2. Կանխիկ դրամով վճարվող բժշկական օգնությունը ներառում է չհատուցվող բժշկական ծախսերի և բժշկական հավելավճարների (կանխիկ դրամով) համաչափ մասը, եթե պահանջվում է ձեր հրամանագրով, այն դեպքում, երբ առողջապահական ապահովագրում չի տրամադրվում:

Եթե ձեր օգնության հրամանագիրը պահանջում է, որ խնամակալ ծնողը պետք է վճարի առողջապահական ապահովագրման համար կամ վճարի չապահովագրված բժշկական ծախսերը, ապա դուք կարող եք դիմել երեխաների ամբողջ օգնության հարկադրման ծառայությունների համար և

1. Խնդրել ԵՕԲ-ին հարկադրել խնամակալ ծնողին կատարել առողջապահական ապահովագրման տրամադրման պարտականությունը: ԵՕԲ-ն կարող է հարկադրել այդ պարտականությունը՝ կախված ձեր գործի հանգամանքներից:
2. Խնդրել ԵՕԲ-ին գանձել խնամակալ ծնողից չապահովագրված բժշկական ծախսերը, այդ թվում՝ համավճարումները, հանումները կամ հավելավճարները, ինչպես սահմանված է WAC 388-14A-1020-ով:

Եթե ձեր օգնության հրամանագիրը չի պահանջում, որ խնամակալ ծնողն առողջապահական ապահովագրում տրամադրի, վճարի բժշկական հավելավճարների մասը կամ վճարի չապահովագրված բժշկական ծախսերը, ինչպես սահմանված է WAC 388-14A-1020-ով, ապա դուք կարող եք դիմել ԵՕԲ ձեր գործը վերանայելու խնդրանքով կամ կարող եք ինքնուրույն փոփոխություններ խնդրել:

Բողոքարկումների տեսակները

Համագումարային խորհուրդ: Համագումարային խորհուրդը ԵՕԲ-ի ադմինիստրատիվ (ոչ դատական) գործընթաց է, որն օգտագործվում է շատ վեճեր լուծելու, քաղաքականությունները բացատրելու և փաստերը պարզաբանելու համար:

1. Համագումարային խորհուրդը կարող է վերանայել դատականորեն և ոչ դատականորեն նշանակված երեխաների օգնության գործերը:
2. Համագումարային խորհուրդը կարող է որոշում կայացնել առանց ձեռք հանողի: Եթե դուք հանդիպում ունեք, ապա կարող եք քննարկել ձեր գործը ԵՕԲ-ի տնօրինության հետ, որը կարող է չեղյալ համարել ԵՕԲ-ի նախորդ որոշումները: Համագումարային խորհուրդը կարող է փոխել որոշակի գործողություններ, որոնք արվել են ԵՕԲ-ի անձնակազմի կողմից, սակայն չի կարող փոխել օրենքով պահանջվող գործողությունները:

Պատական վարույթ (լսում): Լսումը նույնպես ադմինիստրատիվ (ոչ դատական) գործընթաց է: Լսումն ավելի պաշտոնական է, քան համագումարային խորհուրդը, սակայն դատավարության պես պաշտոնական չէ:

1. Նահանգային օրենսդրությունը լսում է առաջարկում միայն որոշակի իրավիճակներում: Եթե ԵՕԲ-ն ձեռք է հանում և ուղարկում, ապա նրանում նշված է, արդյոք դուք լսման իրավունք ունեք, թե ոչ: Ադմինիստրատիվ օրենքի դատավորը (ՍՕԴ) վարում է լսումը: ՍՕԴ-ը ԵՕԲ-ի աշխատողներ չեն:
2. Լսման ընթացքում ՍՕԴ-ն ուսումնասիրում է ձեր գործը և որոշում կայացնում ձեր խնդրի վերաբերյալ: Որպեսզի կանգնեցնեք ԵՕԲ-ին ձեր երեխաների օգնության հրամանագիրը հարկադրելուց, դուք պետք է լսում պահանջեք 20 օրվա ընթացքում (եթե Վաշինգտոն նահանգից ծանուցում եք ստացել) կամ 60 օրերի ընթացքում (եթե Վաշինգտոն նահանգից դուրս ծանուցում եք ստացել) ծանուցումը ստանալուց հետո:
 - ա) Կարող եք լսում պահանջել 20 կամ 60 օրվա սահմանափակումից հետո: Սակայն, ԵՕԲ-ն կհարկադրի ձեր օգնության հրամանագիրը, մինչև լսման որոշում ստանալը: ԵՕԲ-ն չի վերադարձնի որևէ գումար, որը գանձվել է լսման որոշումը սպասելու ընթացքում:
 - բ) Եթե լսում պահանջեք ծանուցումը ստանալուց ավելի քան մեկ տարի հետո, ապա պետք է լավ պատճառ ներկայացնեք (ուշացած պահանջ ներկայացնելու լավ պատճառ): ՍՕԴ-ն կարող է չբավարարել ձեր ուշացած պահանջը: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ դուք ձեր երեխաների օգնության ապագա պարտականության փոփոխման իրավունք ունենաք, նույնիսկ եթե լավ պատճառ չունեք լսման ուշացած պահանջ ներկայացնելու համար:
3. Ձեզ փոստով կուղարկվի ՍՕԴ-ի որոշման օրինակը: ՍՕԴ-ի որոշումը կպարունակի տեղեկություն բողոքարկման ձեր իրավունքների մասին:
4. Եթե հարկն է, ԵՕԲ-ն կտեղեկացնի ձեր օգնության հրամանագրի երկու կողմերին, երբ մենք լսման խնդրանք կստանանք: Երկու կողմերն էլ կարող են մասնակցել լսմանը:

Եթե հարցեր ունեք, դիմեք՝
DIVISION OF CHILD SUPPORT
PO BOX 11520
TACOMA WA 98411-5520

_____ տարածքի ներսում գանգահարեք՝ _____
_____ տարածքից դուրս գանգահարեք՝ _____

TTY/TDD ծառայությունները մատչելի են խոսքի կամ լսողության խնդիրներ ունեցողների համար:
Այցելելը մեր կայքը՝ www.dshs.wa.gov/esa/division-child-support

Այս ծրագրի աշխատանքի ընդունելության, ծառայությունների կամ այլ բնագավառների շրջանակներում խորականություն չի դրվում անձի ռասայի, գույնի, ազգային ծագման, հավատքի, կրոնի, սեռի, տարիքի կամ հաշմանդամության հիման վրա: Պահանջի դեպքում այս ձևը տրամադրվում է այլընտրանքային ֆորմատներով: